ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-23/18» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 23 դեկտեմբերի 2022թ.

Ժամը 12:30

Մասնակցում էին՝

Նախագահ՝ Մկրտիչ Խաչատրյան

Անդամներ՝ Հայկ Հովհաննիսյան, Տիրան Խաչատրյան

Քարտուղար՝ Նելլի Աբովյան

1. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-23/18» ծածկագրով գնման ընթացակարգի դիմում-հայտարարության շտկման մասին

1.1 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-23/18» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի NN 3,4 չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած «ԼԵՈ Ա» ՍՊԸ-ի հայտում առկա անհամապատասխանությունների շտկման նպատակով՝ 20.12.2022թ.-ին կայացած հայտերի բացման նիստով հանձնաժողովը որոշում էր կայացրել. հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 N 526-Ն որոշման 41-րդ կետը, 1 աշխատանքային օրով կասեցնել գնման ընթացակարգը և «ԼԵՈ Ա» ՍՊԸ-ին տալ շտկման հնարավորություն՝ NN 3,4 չափաբաժինների մասով:

2. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-23/18» ծածկագրով գնման ընթացակարգի դիմում-հայտարարության շտկման գնահատման մասին.

2.1 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-23/18» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի դիմում-հայտարարությունների շտկման համար նախատեսված ժամանակահատվածի ավարտից հետո, գնահատող հանձնաժողովը, գնահատեց «ԼԵՈ Ա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, որի արդյունքում պարզվեց հետևյալը.

ա/ «ԼԵՈ Ա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմում-հայտարարության մեջ բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը և իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը,

բ/ «ԼԵՈ Ա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում ֆիրմային անվանման, ապրանքային նշանի, մակնիշի և տեխնիկական բնութագրի սյունակները դատարկ են:

գ/ Դիմում-հայտարարության ծածկագիրը սխալ է, գործունեության հասցեն բացակայում է:

Վստահ կարող ենք արձանագրել, որ «ԼԵՈ Ա» ՍՊԸ-ի կողմից, դիմում-հայտարարության շտկման համար նախատեսված ժամանակահատվածի ընթացքում, ոչ մի շտկում չի իրականացվել:

2.2 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-23/18» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովը որոշեց՝

ա/ «ԼԵՈ Ա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և հայտը մերժել, քանի որ վերջինս չի համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին,

բ/ Սահմանված կարգի համաձայն, ներկայացնել «ԼԵՈ Ա» ՍՊԸ-ի վերաբերյալ փաստաթղթերը ՀՀ Ֆինանսների նախարարություն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

3. Ընթացակարգի չկայացած չափաբաժինները հայտարարելու մասին

3.1. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-23/18» ծածկագրով գնման ընթացակարգի NN 3,4,6,7,8 չափաբաժինների մասով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ "Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-րդ կետի համաձայն՝ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

4. Պայմանագիր կնքելու որոշման մասին.

Հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, ըստ որի՝

4.1. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-23/18» ծածկագրով գնման ընթացակարգի 1,2,5,9-15 չափաբաժինների մասով "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

4.2. Ընտրված՝ հաղթող, մասնակիցների հետ «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն՝ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ **Մ. Խաչատրյան**

Քարտուղար _____ **Ն. Աբովյան**

Անդամներ՝ _____ **Տ. Խաչատրյան**

_____ **Հ. Հովհաննիսյան**